ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ – 2860-ARM (SF)
[2363-ARM (SF) վարկի լրացուցիչ ֆինանսավորում]

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Հատուկ գործառնություններ)

(Ձրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր՝ լրացուցիչ ֆինանսավորում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ամսաթիվ՝ 03 մայիս

ARM ___45299

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(Հատուկ գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ստորագրված _____ Հայաստանի Հանրապետության («Վարկառու») և ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ («ԱԶԲ») միջև:

Հաշվի առնելով, որ

(Ա) Վարկառուի և ԱԶԲ-ի միջև 2007թ-ի դեկտեմբերի 18-ին կնքված Վարկային Համաձայնագրի («Սկզբնական վարկային համաձայանգրի») շրջանակներում ԱԶԲ-ն համաձայնվել է վարկ տրամադրել Վարկառուին ԱԶԲ-ի Հատուկ Միջոցներից քսաներեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար փոխառության հատուկ իրավունքի (SDR 23,498,000) չափով՝ Սկզբնական վարկային համաձայնագրի (Սկզբնական Ծրագիր) Հավելված 1-ում նկարագրված Ծրագրի նպատակներն իրականացնելու համար:

(Բ) «Հայջմուղկոյուղի» ՓԲԸ-ի («ՀՁԿ» ՓԲԸ) և ԱԶԲ-ի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում ՀՁԿ-ն Սկզբնական Ծրագրի հետ կապված որոշ պարտականություններ է ստանձնել ԱԶԲ-ի նկատմամբ:

(Գ)Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին լրացուցիչ վարկ ստանալու նպատակով՝ սույն Վարկային Համաձայանգրի Հավելված 1-ում նկարագրված Ծրագիրն իրականացնելու համար,

(Դ) Ծրագիրը կիրակնացվի Վարկառուի ՀՀ տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի («ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ») և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի («ՀՁԿ» ՓԲԸ) կողմից, որի նպատակով Վարկառուն կտրամադրի «ՀՁԿ» ՓԲԸ-ին վարկային միջոցները՝ սույն պայմանագրի ժամկետներին և պայմաններին համապատասխան՝ ԱԶԲ-ի համաձայնությամբ, և

(Ե) ԱԶԲ-ն համաձայնվել է տրամադրել Վարկառուին վարկ՝ ԱԶԲ-ի Հատուկ Միջոցներից՝ ներքոհիշյալ ժամկետներին և պայմաններին, ինչպես նաև ԱԶԲ-ի և «ՀՁԿ» ՓԲԸ-ի միջև նույն ամսաթվին ստորագրված Ծրագրի համաձայնագրի ժամկետներին և պայմաններին համաձայն,

կողմերը համաձայնվեցին հետևյալի մասին՝

Հոդված I

Վարկի տրամադրման կանոնակարգեր, սահմանումներ

Բաժին 1.01. 2006թ.-ի հունվարի 1 -ի դրությամբ ԱԶԲ-ի Վարկի տրամադրման կանոնակարգերի հատուկ գործառնությունների բոլոր պայմանները, («Վարկի տրամադրման կանոնակարգեր»), այսուհետ նույն ուժով և իմաստով կիրառվում են սույն Վարկային Համաձայնագրի նկատմամբ, հետևյալ փոփոխություններով. .

(ա) Բաժին 2.01 (25) հանվում և փոխարինվում է հետևյալով.

«Ծրագրի Համաձայնագիր» նշանակում է «ՀՁԿ» ՓԲԸ-ի և ԱԶԲ-ի միջև կնքված Ծրագրի Համաձայնագիր,

(բ)Վարկի տրամադրման կանոնակարգերի Բաժին 6.01(ա), 8.01(զ), 8.01(ի), 9.01(դ) և 9.02(դ)-ում նշված «Ծրագրի Գործադիր Գործակալությու ն» անվանումը պետք է փոխարինվի «ՀՁԿ» ՓԲԸ-ով:

Բաժին 1.02. Վարկի տրամադրման կանոնակարգերում սահմանված որոշ տերմիններ, որոնք օգտագործվում են Վարկային Համաձայնագրում ունեն նույն իմաստը, եթե այլ բան սահմանված չէ կամ հանտեքստով այլ բան չի պահանջվում: Վարկային Համաձայնագրում կիրառվող լրացուցիչ տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

(ա)«ՀՁԿ» ՓԲԸ-ն՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ է, կամ ԱԶԲ-ի համար ընդունելի որևէ այլ իրավահաջորդ կողմ,

(բ) «Խորհրդատվական ուղեցույցներ» նշանակում է Ասիական Զարգացման Բանկի և Վարկառուների կողմից խորհրդատուների ներգրավման մասին ԱԶԲ-ի Ուղեցույց (2010թ., պարբերաբար լրամշակվում է),

(գ)«Խորհրդատվական ծառայություններ» նշանակում է ծառայություններ, որոնք ֆինանսավորվում են վարկային միջոցներից՝ համաձայն սույն Վարկային Համաձայնագրի Հավելված 1-ի ենթակետ 2 (բ) և (գ)-ի,

(դ)«ՇՄԿՊ» նշանակում է Ենթածրագրի Շրջակա միջավայրի կառավարման պլան իր համապատասխան լրամշակումներով, որն ընդգրկված է տվյալ Ենթածրագրի Շրջակա միջավայրի նախնական գնման հաշվետվության մեջ,

(ե)«Բնապահպանական անվտանգություն» նշանակում է Անվտանգություն Քաղաքականության Դրույթների (ԱՔԴ) Առդիր 1- ի Բաժին V-ում և Առդիր 4-ում (ըստ անհրաժեշտության) սահմանված սկզբունքներ ու պահանջներ,

(զ) «Գենդերային գործողությունների պլան» նշանակում է ծրագրի կողմից նախապատրաստված և ԱԶԲ-ի կողմից հաստատված գենդերային գործողությունների պլան,

(է) «Ապրանքներ» վարկային միջոցներից ֆինանսավորվող սարքավորումներն ու նյութերն են, ինչպես նաև նմանատիպ ծառայությունները, ինչպիսիք են տեղափոխումները, ապահովագրությունը, տեղադրումը, գործարկումը, վերապատրաստումը, և նախնական տեխսպասարկումը՝ բացառությամբ խորհրդատվական ծառայությունների,

(ը) ՄԻԱՎ/ՁԻԱՀ՝ մարդու իմունային անբավարարության վիրուս/ձեռքբերովի իմունային անբավարարության հիվանդություն,

(թ) «ՇՄՆԶ» նշանակում է Ենթածրագրի համար նախատեսված Վարկառուի կողմից պատրաստված ու ներկայացված և ԱԶԲ-ի կողմից հաստատված Շրջակա միջավայրի նախնական գնում,

(ժ) «Ներդրումային Ծրագիրը» Վարկառուի ջրամատակարարման ոլորտի զարգացման ծրագիրն է 2008-2022 թթ.-ի համար՝ Վարկառուի կողմից 2005.թ-ի ընդունված «Ձրի ազգային քաղաքականության» և 2006թ.-ի «Ձրի ազգային ծրագրի» համաձայն,

(ի) «Հարկադրված վերաբնակեցման անվտանգություն» նշանակում է ԱՔԴ-ի Առդիր 1- ի Բաժին V-ում և Առդիր 4-ում (ըստ անհրաժեշտության) սահմանված սկզբունքներ ու պահանջներ,

(լ) «Վարկի միջոցների ծախսման ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ Վարկի միջոցների ծախսման ձեռնարկ (2007թ., որը պարբերաբար վերանայվում է),

(խ) «ԾԿՁ»-ն նշանակում է 2012թ-ի փետրվարի [ ] դրությամբ Վարկառուի և ԱԶԲ-ի կողմից համաձայնեցված ծրագրի կառավարման ձեռնարկ, որը ժամանակ առ ժամանակ փոփոխության է ենթարկվում համաձայն Վարկառուի և ԱԶԲ-ի վարչական ընթացակարգերի,

(ծ) «Գնումների ուղեցույցները» ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցներն են (2010թ. պարբերաբար լրամշակվում են),

(կ) «Գնումների պլանը» 2012թ-ի փետրվարի [ ] դրությամբ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված Ծրագրի գնումների պլանն է, որը համաձայն Գնումների և Խորհրդատվական ուղեցույցների, ինչպես նաև ԱԶԲ-ի հետ համաձայնեցված այլ կարգավորումների, պարբերաբար նորացվում է,

(հ) «Ծրագրի իրականացման տարածք» այն աշխարահագրական տարածքն է, որտեղ «ՀՁԿ» ՓԲԸ-ն իրականացնում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ, ներառյալ

Վարկառուի այն տարածքը, որտեղ ՀՁԿ-ն պետք է ընդլայնի իր ծառայությունները ծրագրի իրականացման ընթացքում,

(ձ) «Ծրագրի Գործադիր Գործակալությունը» Վարկի տրամադրման կանոնակարգերի համատեքստում ՀՀ ՏԿՆ ՁՏՊԿ-ն է, որը պատասխանատու է ծրագրի իրականացման համար,

(ղ) «Ծրագրի իրականացման միջոցներն» են ապրանքները և աշխատանքները, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում ցանկացած կառուցված, վերանորոգված և վերակառուցված կառույցները,

(ճ) «ՎՇՓ» նշանակում է 2007թ-ի օգոստոսի 13-ին կնքված Սկզբնական ծրագրի Վերաբնակեցման շրջանակային փաստաթուղթ, ներառյալ 2011թ-ի դեկտեմբերի 16-ին լրամշակված տարբերակը), որը պատրաստել ու ներկայացրել է Վարկառուն և հաստատվել է ԱԶԲ-ի կողմից,

(յ) Ենթածրագրի «Վերաբնակեցման պլան» նշանակում է վերաբնակեցման պլան, ներառյալ ցանկացած լրամշակում որը պատրաստել ու ներկայացրել է Վարկառուն և հաստատվել է ԱԶԲ-ի կողմից,

(մ) «Անվտանգության Քաղաքականության Դրույթներ» կամ «ԱՔԴ» նշանակում է ԱԶԲ-ի համապատասխան փաստաթուղթը (2009թ.),

(ն) «Անվտանգության Մոնիտորինգի Հաշվետվություն» նշանակում է Վարկառուի կողմից պատրաստված և ԱԶԲ ներկայացրած յուրանքաչյուր հաշվետվություն, որը նկարագրում է ՇՄԿՊ-ի, ԿՊ-ի իրականացման առաջընթացը և համապատասխանությունը դրանց, ներառյալ ուղղիչ և կանխարգելող գործողությունները,

(շ) «ՀՀ ՏԿՆ ՁՏՊԿ» նշանակում է Վարկառուի՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, կամ ԱԶԲ-ի համար ընդունելի որևէ այլ իրավահաջորդ կողմ,

(ո) «Ենթավարկային համաձայնագիրը» Վարկառուի և ՀՁԿ-ի միջև ԱԶԲ-ի կողմից ընդունելի պայմաններով կնքված համաձայնագիրն է՝ համաձայն սույն Վարկային Համաձայնագրի Բաժին 3.01 (ա)-ի,

(չ) «Ենթածրագիր» նշանակում է Վարկառուի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ցանկացած մաս կամ հատված Ծրագրի սպասարկման տարածքում որոնք, համաձայն ընտրության չափանիշների, ընտրվել են վերանորոգման, կառուցման կամ բարելավման նպատակով՝ համաձայն Վարկային համաձայնագրի Հավելված 5-ի 5-րդ պարբերության,

(պ) «Աշխատանքները» վարկային միջոցներից ֆինանսավորվող շինարարական աշխատանքներն են՝ ներառյալ հորատման և քարտեզագրման ծառայությունները, ինչպես նաև ծրագրի հետ կապված ծառայություններ, որոնք ներկայացվում են որպես այդ աշխատանքները

կատարողի միանձնյա պատասխանատվության մի մաս՝ բացառությամբ խորհրդատվական ծառայությունների, և

(աա). «ՁՁ» նշանակում է ջրամատակարարում և ջրահեռացում:

ՀՈԴՎԱԾ II

Վարկ

Բաժին 2.01. ԱԶԲ-ն համաձայն է ԱԶԲ-ի հատուկ ֆոնդից տրամադրել վարկ Վարկառուին, որը տարբեր տարադրամներով համարժեք է **քսանհինգ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար փոխառության հատուկ իրավունքի (SDR 25,886**):

Բաժին 2.02. (ա) Վարկառուն պետք է արտոնյալ ժամկետի ընթացքում տարեկան 1%-ի, իսկ դրա ավարտից հետո՝ տարեկան 1.5% չափով տոկոսավճար վճարի ԱԶԲ-ին՝ Վարկային Հաշվից հանված Վարկի գումարի և հետագա մնացորդի համար:

(բ) Այս ենթաբաժնի (ա) կետում օգտագործված «արտոնյալ ժամկետը» նշանակում է առաջին Հիմնական Հետվճարման ժամկետին նախորդող ժամանակահատվածը՝ այս Վարկային Համաձայնագրի Հավելված 2-ում սահմանված ամորտիզացիոն ժամանակացույցին համապատասխան::

Բաժին 2.03. Տոկոսային վճարումները և վարկի հետ կապված ցանկացած այլ վճարում ենթակա է վճարման կիսամյակը մեկ անգամ՝ փետրվարի 1-ին և յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ին:

Բաժին 2.04. Վարկառուն պետք է հետ վճարի Վարկային Հաշվից հանված Վարկի մայր գումարը և տոկոսները՝ այս Վարկային Համաձայնագրի Հավելված 2-ում սահմանված ամորտիզացիոն ժամանակացույցին համապատասխան :

Բաժին 2.05. Վարկի Տրման Պայմանների բաժին 4.03(ա) և 4.04-ի նպատակներից ելնելով՝ Վարկի մայր գումարի վերադարձի և տոկոսավճարի վճարման տարադրամը պետք է լինի Դոլարը:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործում

Բաժին 3.01. (ա) Վարկառուն պետք է վերավարկավորի վարկային միջոցները «ՀՁԿ» ՓԲԸ-ին՝ համաձայն Ենթավարկային համաձայնագրի (համաձայնագրերի) ՝ ըստ ԱԶԲ-ի հետ համաձայնեցված դրույթների և պայմանների: Եթե ԱԶԲ-ի կողմից այլ բան սահմանված չէ, ապա Վարկային միջոցների վերավարկավորման պայմանները ներառում են՝ (i) վերավարկավորման տոկոսադրույքը պետք է համարժեք լինի վարկի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքին, (ii) մարման ժամկետը՝ ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը պետք է համապատասխանի վարկի մարման համար նախատեսված ժամկետին, և (iii) «ՀՁԿ» ՓԲԸ-ն կրում է վարկային միջոցների փոխարժեքի հետ կապված ռիսկը:

(բ) Վարկառուն հանձնարարում է «ՀՁԿ» ՓԲԸ-ին տրամադրել վարկային միջոցները Ծրագրից բխող ծախսերի ֆինանսավորման համար՝ սույն Վարկային համաձայնագրի և Ծրագրի համաձայնագրի դրույթներին համաձայն:

Բաժին 3.02. Վարկի գումարները կտեղաբաշխվեն և կհանվեն այս Վարկային Համաձայնագրի համապատասխան Հավելված 3-ի դրույթներին, որը, Վարկառուի և ԱԶԲ միջև համաձայնության միջոցով, կարող է պարբերաբար վերանայվել:

Բաժին 3.03. Եթե այլ բան համաձայեցրած չէ ԱԶԲ-ի կողմից, Վարկառուն պետք է գնի կամ ապահովի որպեսզի ծախսային միավորները գնվեն այս Վարկային Համաձայնագրի Հավելված 4-ի կիրառելի դրույթներին համապատասխան:

Բաժին 3.04. Եթե ԱԶԲ-ի կողմից այլ կերպ սահմանված չէ, Վարկառուի կողմից վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ծախսերը պետք է կատարվեն բացառապես ծրագրի իրականացման նպատակով:

Բաժին 3.05. Ապրանքների, Աշխատանքների և Խորհրդատվական Ծառայությունների մասով Վարկային Հաշվից գումարի ստացումը պետք է կատարվի միայն այն ծախսերի հաշվով, որոնք վերաբերվում են.

(ա) այն ապրանքներին, որոնք արտադրվում են կամ մատակարարվում են և այն ծառայությունների, որոնք տրվում են ԱԶԲ կողմից՝ պարբերաբար որպես գնումների ընդունելի աղբյուր սահմանվող ԱԶԲ անդամ-պետություններից, և

(բ) այն Ապրանքներին, Աշխատանքներին և Խորհրդատվական Ծառայություններին, որոնք համապատասխանում են ընդունելի լինելու այլ նման չափանիշներին, որոնք պարբերաբար սահմանվում են ԱԶԲ կողմից:

Բաժին 3.06. Վարկի մարման ամսաթիվը Վարկային կանոնակարգի Բաժին 8.02 նպատակներով համարվում է 2017թ. հոկտեմբերի 31-ը կամ որևէ այլ ամսաթիվ, որը պարբերաբար կհամաձայնեցվի Վարկառուի և ԱԶԲ-ի միջև:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պայմաններ

Բաժին 4.01. Ծրագրի իրականացման և ծրագրի սարքավորումների շահագործման ընթացքում Վարկառուն պետք է կատարի սույն Վարկային Համաձայնագրի Հավելված 5-ում ամրագրված բոլոր պարտավորությունները:

Բաժին 4.02. Վարկառուն պետք է հնարավորություն ընձեռի ԱԶԲ-ի ներկայացուցիչներին ստուգել Ծրագիրը, Ապրանքներն ու Աշխատանքները, ինչպես նաև ցանկացած համապատասխան գրանցումներն ու փաստաթղթերը:

Բաժին 4.03. (ա) Վարկառուն պետք է (i) բացի կամ պարտադրի որպեսզի բացվեն Ծրագրի համար նախատեսված առանձին հաշիվներ, (ii) ունենա այնպիսի հաշիվներ և նմանատիպ ֆինանսական հաշվետվություններ, որոնք տարեկան կտրվածքով ենթարկվել են աուդիտի՝ համաձայն կիրառվող համապատասխան աուդիտորական ստանդարտներին, որը կատարվել է անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, աշխատանքային փորձը և իմացությունը ընդունելի են ԱԶԲ-ի համար, (iii) տրամադրի ԱԶԲ-ին յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ քան 6 ամիսների ընթացքում աուդիտորական հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև ներգրավված աուդիտորների հաշվետվությունների (ներառյալ աուդիտորի կարծիքը վարկային միջոցների օգտագործման և սույն Վարկային համաձայնագրի ֆինանսական պայմաններին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև պարբերաբար վերականգնվող հաշվի և ծախսերի մասին հաշվետվության ընթացակարգերի վերաբերյալ) հաստատված պատճենները՝ բոլորը անգլերեն լեզվով, և (iv) ԱԶԲ-ի պահանջով տրամադրի ԱԶԲ-ին նմանատիպ հաշիվների և ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև աուդիտի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն:

(բ) Վարկառուն պետք է հնարավորություն ընձեռի ԱԶԲ-ին, իր իսկ պահանջով, պարբերաբար քննարկելու Վարկառուի ծրագրի ֆինանսական հաշվետվությունը և իր ծրագրին վերաբերվող ֆինանսական գործարքները աուդիտորների հետ միասին, որոնք նշանակված կլինեն Վարկառուի կողմից՝ համապատասխան Մաս 4.02(ա)-ին, և պետք է երաշխավորի և պահանջի աուդիտորների յուրաքանչյուր ներկայացուցչի մասնակցությունը ԱԶԲ-ի կողմից պահանջված քննարկմանը՝ Վարկառուի կողմից երաշխավորված ներկայացուցչի մասնակցությամբ, եթե Վարկառուի կողմից այլ կերպ չի պահանջվում:

Բաժին 4.04. Վարկառուն պետք է իր կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որպեսզի «ՀՁԿ» ՓԲԸ-ն հնարավորություն ունենա իրականացնել իր պարտավորությունները ծրագրի համաձայնագրի ներքո, ներառյալ սակագների սահմանումն և կիրառումը՝ ինչպես նշված է սույն Վարկային համաձայնագրի հավելված 5-ի 7-րդ պարբերության մեջ, ինչպես նաև պետք է խուսափի ցանկացած գործարքից, որը կխոչընդոտի այդ պարտավորությունների կատարման ընթացքին:

Բաժին 4.05. (ա) Վարկառուն պետք է իրականացնի Ենթավարկային համաձայնագրի ներքո իր իրավունքները, որպեսզի պաշտպանի Վարկառուի և ԱԶԲ-ի շահերը՝ իրականացնելով վարկի շրջանակներում հետապնդվող նպատակները:

(բ) Առանց ԱԶԲ-ի նախնական համաձայնության Ենթավարկային համաձայնագրի ներքո չի կարող նշանակվել, փոփոխվել կամ չեղյալ համարվել որևէ իրավունք կամ պարտավորություն:

ՀՈԴՎԱԾ V

ժամանակավոր դադարեցում, մարման ժամկետի արագացում

Բաժին 5.01 Վարկային հաշվից Վարկառուի կողմից գումարների հանման իրավունքի ժամանակավոր դադարեցումը համարվում է լրացուցիչ իրադարձություն՝ Վարկի տրամադրման կանոնակարգերի բաժին 8.01 (խ)-ի իմաստով: Համաձայն Սկզբնական վարկային համաձայնագրի վարկը կարող է է ժամանակավոր դադարեցվել, չեղյալ համարվել կամ մարվել մինչև նախորոք համաձայնեցված մարման ժամկետը:

Բաժին 5.02 է Վարկի տրամադրման կանոնակարգերի Բաժին 8.07 (դ)-ի իմաստով լրացուցիչ իրադարձություն է համարվում, եթե տեղի է ունեցել Վարկային համաձայնագրի Բաժին 5.01 –ում սահմանված իրադարձությունը:

ՀՈԴՎԱԾ VI

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը

Բաժին 6.01. Վարկի Տրման Պայմանների բաժին 9.01 (զ)-ի նպատակներից ելնելով, սույն Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ սահմանվում է հետևյալ լրացուցիչ պայմանը. Ենթավարկային համաձայնագիրը պետք է ԱԶԲ-ի կողմից ընդունելի ձևով և բովանդակությամբ պատշաճ ձևով հաստատվի, ձևակերպվի և ներկայացվի Վարկառուի և «ՀՁԿ» ՓԲԸ-ի անունից, որի իրականացումը, համաձայն Ենթավարկային համաձայնագրի դրույթների, պարտադիր է Վարկառուի և «ՀՁԿ» ՓԲԸ-ի համար:

Բաժին 6.02. Վարկի Տրման Պայմանների բաժին 9.04-ի նպատակներից ելնելով՝ Վարկային Համաձայնագրի ստորագրումից հետո 30-օրյա ժամկետ է սահմանված Վարկային Համաձայնագրերի ուժի մեջ մտնելու համար:

ՀՈԴՎԱԾ VII

Լիազորությունների փոխանցում

Բաժին 7.01. Այսուհետ Վարկառուն նշանակում է «ՀՁԿ» ՓԲԸ-ին իր գործակալ այս Վարկային Համաձայնագրի բաժիններ 3.02, 3.03 և 3.05-ով և Վարկի տրման պայմանների 5.01, 5.02 և 5.03 բաժիններով պահաջվող կամ թույլատրվող գործողությունների իրականացման և պայմանագիր կնքելու նպատակով:

Բաժին 7.02. «ՀՁԿ» ՓԲԸ-ի կողմից վարկային համաձայնագրի 7.01 մասի շրջանակներում կատարված ցանկացած գործողություն կամ ձեռք բերված համաձայնության (գործարք) պարտավորություններ կստեղծի Վարկառուի համար և վերջինիս համար ունենալու են նույն ուժն ու արդյունքները, ինչպիսիք կառաջանային գործարքին իր անմիջական մասնակցության դեպքում:

Բաժին 7.03. Սույն Վարկային համաձայնագրի Բաժին 7.01-ում «ՀՁԿ» ՓԲԸ-ին տրված իրավասությունները Վարկառուի և ԱԶԲ-ի համաձայնությամբ կարող են չեղյալ համարվել կամ փոփոխվել:

ՀՈԴՎԱԾ VIII

Այլ դրույթներ

Բաժին 8.01. Վարկառուի Ֆինանսների նախարարությունը հանդես է գալիս որպես Վարկառուի ներկայացուցիչ՝ համաձայն Վարկի տրման պայմանների Բաժին 11.02-ի:

Բաժին 8.02. Վարկի տրման պայմանների Բաժին 11.01-ի դրույթների համաձայն նշված են հետևյալ հասցեները՝

<u>Վարկառու</u>

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյանի փողոց 1
0010 Երևան
Հայաստանի Հանրապետություն

Ֆաքսի համարը

+374 10 524282

ԱԶԲ

Ասիական Զարգացման Բանկ
6 ADB Avenue
Mandaluyong City
1550 Mentor Manila,
Philippines

Ֆաքսի համարները

(632) 636-2444
(632) 636-2484

Գործելով իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով՝ կողմերը, այսպիսով, վկայում են (հաստատում են) սույն Վարկային համաձայնագիրը համապատասխանաբար իրենց անուններից ստորագրելու մասին: Համաձայնագիրը կներկայացվի ԱԶԲ-ի գլխավոր գրասենյակ՝ վերոհիշյալ ամսաթվի դրությամբ:

Հայաստանի Հանրապետություն

_____

Տիգրան Դավթյան
ՀՀ էկոնոմիկայի նախարար

Ասիական Զարգացման Բանկ

_____

Դեյվիդ Դոուլ
Հայաստանում ԱԶԲ-ի մշտական
առաքելության ներկայուցիցիչ

Հավելված 1

Ծրագրի նկարագիրը

1. Ծրագրի արդյունքը կլինի հասանելի, բարելավված ջրամատակարարման և ջրահեռացման ապահով, վստահելի և կայուն ծառայությունները Վարկառուի տարածքում, որոնք կկառավարվեն առևտրային սկզբունքներով և շրջակա միջավայրի հուսալի փորձով:

2. Ծրագիրը կազմված է հետևյալ մասերից՝

(ա) ջրամատակարարման բաշխիչ ցանցերի նորոգում, փոխարինում և/կամ ընդլայնում՝ Ծրագրի Շրջանակներում ընդգրկված թվով մոտ 18 քաղաքներում և 92 գյուղական համայնքներում,

(բ) Օժանդակության տրամադրում սույն կետի (ա) ենթակետում նշված աշխատանքների հետ կապված ՝ (i) Ծրագրի նախագծման, իրականացման և վերահսկման և (ii) Ծրագրի տեխնիկական և ֆինանսական աուդիտի իրականացման համար,

(գ) «ՀՁԿ» ՓԲԸ-ի և «ՀՁԿ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում չընդգրկված համայնքներում ջրամատակարարման ծառայությունները մատակարարների կարողությունների զարգացում:

3. Ծրագիրը ենթադրվում է ավարտել մինչև 2017թ.-ի ապրիլի 30-ը:

Հավելված 2

Մարման սխեմա
(Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր՝ լրացուցիչ ֆինանսավորում)

Վճարման ամսաթիվ	Հիմնական գումարի մարում (ներկայացված է SDR-ով)*
2020թ-ի օգոստոսի 1	539,292
2021թ-ի փետրվարի 1	539,292
2021թ-ի օգոստոսի 1	539,292
2022թ-ի փետրվարի 1	539,292
2022թ-ի օգոստոսի 1	539,292
2023թ-ի փետրվարի 1	539,292
2023թ-ի օգոստոսի 1	539,292
2024թ-ի փետրվարի 1	539,292
2024թ-ի օգոստոսի 1	539,292
2025թ-ի փետրվարի 1	539,292
2025թ-ի օգոստոսի 1	539,292
2026թ-ի փետրվարի 1	539,292
2026թ-ի օգոստոսի 1	539,292
2027թ-ի փետրվարի 1	539,292
2027թ-ի օգոստոսի 1	539,292
2028թ-ի փետրվարի 1	539,292
2028թ-ի օգոստոսի 1	539,292
2029թ-ի փետրվարի 1	539,292
2029թ-ի օգոստոսի 1	539,292
2030թ-ի փետրվարի 1	539,292
2030թ-ի օգոստոսի 1	539,292
2031թ-ի փետրվարի 1	539,292
2031թ-ի օգոստոսի 1	539,292
2032թ-ի փետրվարի 1	539,292
2032թ-ի օգոստոսի 1	539,292
2033թ-ի փետրվարի 1	539,292
2033թ-ի օգոստոսի 1	539,292
2034թ-ի փետրվարի 1	539,292
2034թ-ի օգոստոսի 1	539,292
2035թ-ի փետրվարի 1	539,292
2035թ-ի օգոստոսի 1	539,292
2036թ-ի փետրվարի 1	539,292
2036թ-ի օգոստոսի 1	539,292
2037թ-ի փետրվարի 1	539,292
2037թ-ի օգոստոսի 1	539,292
2038թ-ի փետրվարի 1	539,292
2038թ-ի օգոստոսի 1	539,292
2039թ-ի փետրվարի 1	539,292
2039թ-ի օգոստոսի 1	539,292
2040թ-ի փետրվարի 1	539,292
2040թ-ի օգոստոսի 1	539,292

2041թ-ի փետրվարի 1	539,292
2041թ-ի օգոստոսի 1	539,292
2042թ-ի փետրվարի 1	539,292
2042թ-ի օգոստոսի 1	539,292
2043թ-ի փետրվարի 1	539,292
2043թ-ի օգոստոսի 1	539,292
2044թ-ի փետրվարի 1	539,292
ԸՆԴԱՄԵՆԸ	25,886,000

*Վճարումը կատարվում է համաձայն Վարկի Տրման Պայմանների Բաժիններ 3.04-ի և 4.03-ի դրույթների

Հավելված 3

Վարկային միջոցների բաշխում և վճարում

Ընդհանուր

1. Սույն Հավելվածին կից Աղյուսակը սահմանում է ծախսային տարրերի այն Կատեգորիաները, որոնք պետք է ֆինանսավորվեն Վարկի միջոցներից, ինչպես նաև Վարկային միջոցների բաշխումը յուրաքանչյուր նմանատիպ Կատեգորիայի համար (այսուհետ «Աղյուսակ»): («Կատեգորիա» հղումը այս Հավելվածում նշանակում է Աղյուսակի «Կատեգորիա» կամ «Ենթակատեգորիա»):

ԱԶԲ-ի ֆինանսավորման տոկոսադրույքը

2. Եթե ԱԶԲ-ի կողմից այլ կերպ սահմանված չէ, ապա յուրաքանչյուր ծախսային տարր պետք է ֆինանսավորվի Վարկային միջոցներից՝ Աղյուսակում սահմանված տոկոսադրույքների հիման վրա:

Տոկոսադրույք

3. Կատեգորիա 5-ի համար բաշխված գումարը նախատեսված է Ծրագրի իրականացման ընթացքում Վարկի տոկոսադրույքի ֆինանսավորման համար:

Վերաբաշխում

4. Չնայած Վարկի միջոցների բաշխմանը և աղյուսակում ներկայացված դուրսբերման տոկոսադրույքներին՝

(ա) եթե Վարկից տրամադրված գումարը ցանկացած կատեգորիայի համար կհամարվի անբավարար տվյալ կատեգորիայում ներկայացված ծախսերի ֆինանսավորման համար, ապա ԱԶԲ-ն, տեղեկացնելով Վարկառուին, կարող է (i) անհրաժեշտ գումար վերաբաշխել այս կատեգորիայի համար՝ այլ կատեգորիաների համար տրամադրված գումարներից՝ պակասորդը ծածկելու նպատակով, որոնք ըստ ԱԶԲ-ին անհրաժեշտ չեն այլ ծախսերի համար, և (ii) եթե նմանատիպ վերաբաշխման միջոցով հնարավոր չի լինի ծածկել ողջ պակասորդը, ապա նվազեցնել դուրսբերման տոկոսադրույքը, որը կիրառվում է նմանատիպ ծախսերի դեպքում, որպեսզի այս կատեգորիայի մնացած դուրսբերումները շարունակվեն մինչև մնացած բոլոր ծախսերը իրականացվեն, և,

(բ) եթե ցանկացած կատեգորիայի համար տրամադրված վարկի գումարը ավել է տվյալ կատեգորիայի բոլոր նախատեսված ծախսերից, ապա ԱԶԲ-ը, տեղեկացնելով Վարկառուին, կարող է վերաբաշխել ավել գումարը ցանկացած այլ կատեգորիայի համար:

Մասհանման Ընթացակարգը

5. Եթե ԱԶԲ-ի կողմից այլ կերպ սահմանված չէ, ապա Վարկային միջոցներիը կմասհանվեն/վճարվեն ըստ ԱԶԲ-ի «Վարկային միջոցների մասհանման ձեռնարկի»:

Հատուկ Հաշիվ և Ծախսերի Հաշվետվություն

6. (ա) Եթե ԱԶԲ-ի կողմից այլ կերպ սահմանված չէ, Վարկառուն պետք է հանձնարարի «ՀՁԿ» ՓԲԸ-ին անմիջապես բացել Հատուկ Հաշիվ Վարկառուի գանձապետարանի միջոցով՝ սույն Վարկն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ: Հատուկ Հաշիվը պետք է հիմնվի, կառավարվի, համալրվի և փակվի՝ ԱԶԲ-ի «Վարկային միջոցների մասհանման ձեռնարկի» համաձայն, և «ՀՁԿ» ՓԲԸ-ն ու ԱԶԲ-ի միջև համաձայնեցված մանրամասն միջոցառումներին համապատասխան: Հատուկ Հաշիվը պետք է օգտագործվի միայն Ծրագրի նպատակների համար: Հատուկ Հաշիվի տարադրամ կհանդիսանա Դոլարը: Հատուկ Հաշիվի առավելագույն սահմանը չպետք է գերազանցի ստորև բերված գումարների նվազագույն չափը (i) ծրագրի վեց ամիսների համար նախատեսված ծախսերի գումարից, կամ (ii) վարկի գումարի տաս (10) տոկոսին համարժեք գումարից:

(բ) Ծախսերի ընթացակարգի հաշվետվությունը կարող է օգտագործվել անհրաժեշտ ծախսերի փոխհատուցման և Հատուկ Հաշվին փոխանցված ավանսների մարման համար՝ համաձայն ԱԶԲ-ի ,Վարկի միջոցների ծախսման ձեռնարկի» և «ՀՁԿ» ՓԲԸ-ի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված մանրամասն կարգավորումների: Ցանկացած անհատական վճարում, որը ենթակա է փոխհատուցման կամ մարման համաձայն ծախսերի ընթացակարգի, չպետք է գերազանցի 100,000 դոլարին համարժեք գումարը:

<u>Հետադարձ ֆինանսավորում</u>

7.Վարկային հաշվից վճարումներ կարող են կատարվել ծրագրից բխող ողջամիտ ծախսերը փոխհատուցելու համար մինչև Վարկային Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ շուտ քան սույն Վարկային Համաձայնագրի խորհրդատվական ծառայությունների ուժի մեջ մտնելուց 12 ամիս առաջ՝ առավելագույնը վարկի գումարի 20%-ին համարժեք գումարի չափով:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՄԱՍՀԱՆՈՒՄ (Ջրամատակարարման և Ջրահեռացման Սեկտորի Ծրագիր – Լրացուցիչ Ֆինանսավորում)				
ԿԱՏԵԳՈՐԻԱ				ԱԶԲ ֆինանսավորում
Համար	Անվանում	ԱԶԲ ֆինանսավորման համար բաշխված ընդհանուր գումարը (SDR) Կատեգորիա	Ենթակատեգորիա	Վարկային հաշվից մասհանման ենթակա տոկոսադրույքներ և հիմքեր
1	Աշխատանքներ	19,414,000		Պահանջվող ծախսերի 95 տոկոսը*
2	Ապրանքներ	1,294,000		Պահանջվող ծախսերի 100 տոկոսը*
3	Խորհրդատվական ծառայություններ	1,534,000		Պահանջվող ծախսերի 100 տոկոսը*
3Ա	Նախագծում և վերահսկողություն		1,424,000	Պահանջվող ծախսերի 100 տոկոսը*
3Բ	Ծրագրի տեխնիկական և ֆինանսական աուդիտ		110,000	Պահանջվող ծախսերի 100 տոկոսը*
4	Հավելյալ ծախսեր՝ ծրագրի կառավարում և գործառնական ծախսեր	764,000		Պահանջվող ծախսերի 100 տոկոսը*
5	Տոկոսավճար	712,000		Վճարման ենթակա գումարի 100 տոկոսը
6	Չբաշխված	2,168,000		
	Ընդամենը	25,886,000		

* Առանց Վարկառուի երկրում ընդունված հարկերի և տուրքերի

Հավելված 4

Ապրանքների, Աշխատանքների և Խորհրդատվական Ծառայությունների Գնում

Ընդհանուր դրույթներ

1. Ապրանքների, Աշխատանքների և Խորհրդատվական Ծառայությունների գնումը պետք է իրականացվի Գնումների Ուղեցույցի համաձայն և կառավարվի Խորհրդատվական Ուղեցույցով:

2. Այս Վարկային Համաձայնագրում օգտագործվող և այլ կերպ չսահմանված բոլոր տերմիններն ունեն այն իմաստը, որը տրված է Գնումների Ուղեցույցում և/կամ Խորհրդատվական Ուղեցույցում:

Ապրանքների և աշխատանքների գնում

3. Եթե ԱԶԲ-ի կողմից այլ բան սահմանված չէ, ապրանքները և աշխատաքները ձեռք են բերվում բացառապես համաձայն ստորև նշված գնումների մեթոդների.

(ա)Միջազգային մրցույթ
(բ)Տեղական մրցույթ
(գ)Առուվաճառքի ուղղակի գործարք (առանց մրցույթի)

4. Գնման մեթոդները հանգամանորեն պետք է արտացոլվեն Գնումների պլանում: Վարկառուն, ԱԶԲ-ի համաձայնությամբ, միայն իրավունք ունի փոփոխության ենթարկել գնման կամ շեմի արժեքները, և իր հերթին կատարի համապատասխան ձևափոխումները Գնումների պլանում:

Տեղական մրցույթ

5. Վարկառուն և ԱԶԲ-ն պետք է ապահովեն, որպեսզի մինչև տեղական մրցույթի պայմաններով գնման որևէ գործընթաց սկսելը տեղական մրցույթի անցկացման ընթացակարգերը համապատասխանեն Գնումների ուղեցույցներին: Վարկառուի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված ընթացակարգերի հետագա ցանկացած փոփոխություն կամ պարզաբանում ուժի մեջ է մտնում միայն Վարկառուի և ԱԶԲ-ի կողմից հաստատվելուց հետո:

Պայմանագրերի շնորհման պայմանները

6. Վարկառուն չպետք է Աշխատանքների հետ կապված որևէ պայմանագիր ստորագրի բնապահպանական ազդեցություն ենթադրող որևէ ենթածրագրի համար մինչև Ծրագրի Գործադիր մարմինը

(ա) Բնապահպանության նախարարությունից չստանա ՇՄՆԶ վերջնական հավանությունը; և

(բ)Աշխատանքների պայմանագրում չներառի ՇՄԿՊ-ի համապատասխան դրույթները:

7. Վարկառուն չպետք է հարկադիր վերաբնակեցում նախատեսող Ենթածրագրի Աշխատանքների պայմանագիր ստորորագրի, մինչև Վարկառուն նման Ենթածրագրի մանրամասն նկարագրության հիման վրա պատրաստված վերջնական ՎՊ չներկայացնի ԱԶԲ-ին և չստանա վերջինիս հավանությունը:

Խորհրդատվական Ծառայություններ

8. Բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ-ն այլ կերպ որոշի և բացառությամբ ստորև բերված սահմանումների, Վարկառուն Խորհրդատվական Ծառայություններ ընտրելիս և ներգրավելիս, պետք է կատարի որակի և գնի վրա հիմնված ընտրություն:
9. Խորհրդատվական Ծառայություններ ընտրելիս և ներգրավելիս Վարկառուն, ի թիվս այլոց պետք է հետևի Գնումների պլանում սահմանված ընթացակարգերին և ըստ որակավորման Խորհրդատուի ընտրության մեթոդին՝ տեխնիկական և ֆինանսական աուդիտ իրականացնելու համար:

Արդյունաբերական կամ մտավոր սեփականության իրավունք

10. (ա) Վարկառուն կապահովի, որպեսզի բոլոր գնվող Ապրանքներն ու Աշխատանքները (ներառյալ, առանց սահմանափակումների, ողջ համակարգչային տեխնիկան, ծրագրերը և համակարգերը՝ անկախ այն հանգամանքից առանձին են ձեռք բերված, թե ներգրավված են գնվող այլ ապրանքների և ծառայությունների մեջ) չոտնահարեն և չխախտեն արտադրական կամ մտավոր սեփականության որևէ իրավունք կամ էլ երրորդ կողմի պահանջի առարկա հանդիսանան:

(բ) Վարկառուն ապահովում է, որպեսզի Ապրանքներ և Աշխատանքների գնման համար կնքած պայմանագրերը, այս բաժնի (ա) կետում նկարագրված դեպքերի իմաստով, կապալառուի կամ մատակարարի կողմից համապատասխան ներկայացուցչականություն, երաշխիքներ և, անհրաժեշտության դեպքում, նաև փոխ-հատուցումներ պարունակեն:

11. Վարկառուն ապահովում է, որպեսզի ԱԶԲ ֆինանսավորմամբ խորհրդատու-ների հետ պայմանագրերը խորհրդատուների կողմից համապատասխան ներկա-յացուցչականություն, երաշխիքներ և, անհրաժեշտության դեպքում, նաև փոխ-հատուցումներ պարունակեն՝ ապահովելու համար, որպեսզի տրամադրվող խորհրդատ-վական ծառայությունները չոտնահարեն և չխախտեն որևէ արտադրական կամ մտավոր սեփականության իրավունք կամ էլ երրորդ կողմի պահանջի առարկա հանդիսանան:

Գնումների որոշումների վերանայում ԱԶԲ կողմից

12. Միջազգային մրցույթի ընթացակարգերով գնված պայմանագրերը կամ Խորհրդատ-վական ծառայությունների պայմանագրերը ԱԶԲ-ի նախնական դիտարկման առարկա են հանդիսանում, եթե այլ բան համաձայնեցրած չէ Վարկառուի ու ԱԶԲ միջև և սահմանված Գնումների պլանով:
13. Վարկառուն պետք է ստանա ԱԶԲ-ի նախնական հավանությունը մինչև.

(ա) Ապրանքների կամ Աշխատանքների պայմանգրերի ժամկետների երկարացումը,

(բ) Ապրանքների կամ Աշխատանքների պայմանագրերի պայմանների փոփոխությունը կամ հրաժարականը, ներառյալ ներքոհիշյալ (գ) և (դ) կետերում նշված պատվերի ցանկացած փոփոխություն,

(գ)Ապրանքների կամ Աշխատանքների պայմանագրերի պատվերի ցանկացած փոփոխություն, որն ընդհանուր առմամբ հանգեցնում է պայմանագրի նախնական գումարի աճի (տարաձայնություններից խուսափելու համար այդ գումարը պետք է հաշվի առնի նման պայմանագրերի շրջանակներում նախկինում կատարված կամ ներկա պատվերների փոփոխությունները),

(դ) Ապրանքների կամ Աշխատանքների պայմանագրերի պատվերի ցանկացած փոփոխություն, որը հանգեցնում է պայմանագրի նախնական գնի 15%-ի փոփոխության (աճ կամ նվազեցում), եթե նույնիսկ ընդհանուր առմամբ այդ փոփոխությունը չի անդրադառնալու պայմանագրի սկզբնական գումարի վրա: Տարաձայնություններից խուսափելու համար այդ գումարը պետք է հաշվի առնի նման պայմանագրերի շրջանակներում նախկինում կատարված կամ ներկա պատվերների փոփոխությունները:

14. ԱՁԲ-ն պետք է պատասխանի 13-րդ կետում նշված յուրաքնաչյուր խնդրանքին՝ նման խնդրանք ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում (Մանիլա): Նման պատասխանը պետք է ցույց տա, որ (ա) խնդրանքը հաստատված է, (բ) մերժված է, (գ) սպասում է լրացուցիչ տեղեկատվության կամ փաստատթղթերի կամ (դ)դիտարկվում է ԱՁԲ-ի Գնումների հանձնաժողովի կողմից: Եթե ԱՁԲ-ն նման խնդրանքը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չի ներկայացնում, ապա նման խնդրանքը համարվում է ԱՁԲ-ի կողմից հաստատված (բացառությամբ այն դեպքերի, երբ խնդրանքը դիտարկվում է ԱՁԲ-ի Գնումների հանձնաժողովի կողմից): Կետ (գ)-ի դեպքում Վարկառուն պետք է անմիջապես տրամադրի պահանջվող տեղեկատվությունը կամ փաստատթղթերը, իսկ ԱՁԲ-ն պետք է պատասխանի համապատասխամ խնդրանքին այն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում (Մանիլայում): Կետ (դ)-ի դեպքումԱՁԲ-ն պետք է տեղեկացնի Վարակառուին Գնումների հանձնաժողովի որոշման մասին՝ նման որոշում կայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում (Մանիլայում):

15. Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի ՀՁԿ-ն

(ա) ԱՁԲ-ի կողմից հաստավելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ԱՁԲ-ին ներկայացնի պայմանգրերի ժամկետների երկարացման, փոփոխությունների կամ հրաժարականների (ներառյալ փոփոխված պատվերները) պատճենները համաձայն կետ 13-ի և պայմանագրի փոփոխությունները և

(բ) կատարի ԱՁԲ-ի նախնական հավանությունը չպահանջող Ապրանքների և Աշխատանքների փոփոխված պատվերների պայմանագրերի հաշվառում և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ ներկայացնի այդ հաշվառումը ԱՁԲ-ի դիտարկմանը:

Հավելված 5

Ծրագրի իրականացում, ֆինանսական հարցեր

Իրականացման Միջոցառումներ

1. Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ծրագիրն իրականացվի ԾԿՁ-ում սահմանված մանրամասն միջոցառումներին համաձայն: ԾԿՁ-ի ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ կմտնի միայն նման փոփոխությունը Վարկառուի և ԱԶԲ կողմից հաստատվելու դեպքում: ԾԿՁ և այս Վարկային Համաձայնագրի միջև տարաձայնությունների դեպքում գերակայությունը տրվում է Վարկային Համաձայնագրի դույթներին:

Համաֆինանսավորում

2. Վարկառուն պարտավորվում է ապահովել (ա) ծրագրի համար անհրաժեշտ համաֆինանսավորման ժամանակին տրամադրումը և դուրսգրումը՝ ծրագրի իրականացումը ժամանակին ավարտելու նպատակով, և (բ) լրացուցիչ համաֆինանսավորման ժամանակին տրամադրումը միջոցների անբավարարության կամ գերածախսի դեպքում:

Հավաքագրման արդյունավետություն

3. Վարկառուն պետք է ապահովի, որ «ՀՁԿ» ՓԲԸ և այլ ծառայություն մատուցող կազմակերպություններ կիրառեն հարկադիր մեխանիզմներ և արտոնություններ՝ արդյունավետ հավաքագրում ապահովելու և ջրամատակարարման և ջրահեռացման ծառայության դիմաց վճարներից խուսափողներին տուգանելու նպատակով՝ հավաքագրման արդյունավետությունը բարելավելու, վճարումից խուսափելը սահմանափակելու և ջրամատակարարման և ջրահեռացման գործառնությունների անխափանությունը երաշխավորելու նպատակով:

Սակագին

4. Սկզբնական վարկային համաձայնագրի Հավելված 5-ի կետ 7-ը հանվում և ամբողջությամբ փոխարինում է հետևյալով՝ 2014թ-ի առաջին եռամսյակից ոչ ուշ Վարկառուն պետք է ապահովի սակագնային պլանի (Առաջարկված սակագնային պլան) ներկայացումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) քննարկմանը՝ վերջինիս հավանությունը ստանալու համար: Առաջարկվող Սակագնային պլանը պետք է նպաստի «ՀՁԿ» ՓԲԸ-ի երկարատև ֆինանսական կայունությանը և առևտրային գործունեության կենսունակությանը և ժամանակի ընթացքում պետական սուբսիդիայի աստիճանական կրճատմանը: Առանց սահմանափակելու վերոհիշյալը, Առաջարկվող սակագնային պլանը և ՀԾԿՀ-ին ներկայացվող յուրաքանչյուր հետագա սակագնային պլան պետք է ներառնի գործող սակագնի ճշգրտում՝

հաշվի առնելով սպառողական գների գործակցի աճը Հայաստանում, որը հաշվարկվել է նախորդ օրացույցային տարվա սպառողական գների գործակցի աճի հիման վրա՝ ըստ Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայության տվյալների: Մինչև ՀԾԿՀ-ին ներկայացնելը «ՀՁԿ» ՓԲԸ-ն պետք է քննարկի ԱԶԲ-ի հետ Առաջարկվող սակագնային պլանի բովանդակությունը: Այն դեպքում, եթե ՀԾԿՀ-ն չի ընդունում Առաջարկվող սակագնային պլանը ՀԾԿՀ-ին ներկայացված ձևով, Վարկառուն և «ՀՁԿ» ՓԲԸ-ն պետք է ԱԶԲ-ի հետ քննարկեն հաջորդ սակագնային պլանի բովանդակությունը, որը պետք է առաջարկվի ՀԾԿՀ-ին՝ սակագնի վերանայման հաջորդ փուլում:

Ենթածրագրի ընտրության չափանիշները

5. Վարկառուն պետք է երաշխավորի և պարտադրի «ՀՁԿ» ՓԲԸ-ին, որպեսզի բոլոր ենթածրագրերը ընտրվեն հետևյալ ընտրության չափանիշներին համապատասխան՝

(ա) յուրաքանչյուր ենթածրագիր պետք է համապատասխանի ներդրումային ծրագրին,

(բ) յուրաքանչյուր ենթածրագիր տեղակայված լինի ծրագրի սպասարկման տարածքում,

(գ) գոյություն ունեցող բաշխիչ ցանցը և ենթածրագրի մեջ ընդգրկված համակարգերի սարքավորումները քայքայված են, ժանգապատ և վնասված և/իսկ կոյուղագծերը շահագործման պիտանի չեն ու խցանված են, ինչի հետևանքով վտանգվում են ջրահավաք ավազանները և ոչ բարենպաստ պայմաններ են ստեղծվում շրջակակա միջավայրի համար,

(դ) յուրաքանչյուր ենթածրագիր տեխնիկապես կայուն է՝ հաշվի առնելով ծախսածածկման և տեխնիկապես ընդունելի տարբերակը, որը տնտեսապես և ֆինանսապես հիմնավորված է,

(ե) այն գյուղերը, որոնք չեն սպասարկվում երկարաժամկետ «ՀԿՁ» ՓԲԸ-ի կողմից, գյուղապետարանը և/կամ համայնքը, երկարատև ժամկետով և ՀՀ ՏԿՆ ՁՏՊԿ-ի համար ընդունելի պայմաններով, պարտավորվում են՝

(i) իրականացնել պարբերական (առնվազն կես տարին մեկ) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, ջրավազանների և կապատաժների, ջրամատակարարման մաքրաման և այլ կարգի ստուգում, որը կհամապատասխանի տեխնիկական և սանիտարական պահանջներին՝ Վարկառուի օրենսդրության համաձայն:

(ii) տրամադրել կառավարման և տեխնիկական աջակցություն, և վերապատրաստում՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի և նրանց պարտավորությունների վերաբերյալ

(զ) յուրաքանչյուր Ենթածրագիր համապատասխանում է ԱԶԲ անվտանգության քաղաքականությանը և չի առնչվում շրջակա միջավայրի ոչ մի էական ազդեցության հետ (մասնավորապես, չի պատկանում ԱԶԲ-ի Շրջակա միջավայրի քաղաքականության զգայուն ենթածրագրերի Ա կամ Բ կատեգորիաներին, և

(է) յուրաքանչյուր Ենթածրագիր անհրաժեշտ է ավարտել ծրագրի իրականացման ժամանակահատվածի շրջանակներում:

Շրջակա միջավայր

6.Վարկառուն պետք է ապահովի և պարտադրի ՀՁԿ-ին որպեսզի յուրաքանչյուր Ենթածրագրի նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, գործողությունը և ավարտը համապատասխանի ա/ Վարկառուի՝ շրջակա միջավայրին, առողջապահությանը և անվտանգությանը վերաբերվող օրենսդրությանը, բ/ Բնապահ-պանական երաշխիքներին, գ/ ՇՄՆԶ-ում և ՇՄԿՊ-ում սահմանված պահանջներին և դ/ ինչպես նաև Անվտանգության մոնիտորինգի հաշվետվությամբ նախատեսված ուղղիչ կամ կանխարգելող գործողություններին:

Հողի ձեռքբերում և վերաբնակեցում

7.Վարկառուն երաշխավորում և պարտադրում է «ՀՁԿ» ՓԲԸ-ին, որպեսզի վերջինս

(ա) զերծ մնա ցանկացած աշխատանքներից՝ կապված հողի ձերք բերման, վաճառքի, նվիրատվության կամ մուտքի արգելման հետ, որոնց դեպքերում կկիրառվի ԱԶԲ-ի Հարկադրված վերաբնակեցման քաղաքականությունը (1995թ.)՝ երաշխավորելով ծրագրի բոլոր կառույցների պահպանումը և գործունեության իրականացումը համապատասխան օտարման գոտիների սահմաններում:

(բ) Ծրագրի շրջանակներում հողի ձեռքբերման կամ վերաբնակեցման չնախատեսված անհրաժեշտության առաջացման դեպքում հողի ձեռքբերումը և/կամ վերաբնակեցումը պետք է իրականացվի (ա) Վարկառուի հողի ձեռքբերման և հարկադիր վերաբնակեցման օրենսդրության (բ) հարկադիր վերաբնակեցման երաշխիքներին (գ) վերաբնակեցման կառուցվածքին (դ) ինչպես նաև ՎՊ-ում նշված բոլոր միջոցներին և պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով Անվտանգության մոնիտորինգի հաշվետվությամբ նախատեսված ուղղիչ կամ կանխարգելող գործողությունները:

8.Առանց Հարկադրված վերաբնակեցման անվտանգության, ՎՇՓ կամ ՎՊ կիրառման սահմանափակման, Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի Ենթածրագրի հետ կապված և ոչ մի ֆիզիկական կամ տնտեսական տարհանում չիրականացվի մինչև

(ա)ՎՊ-ի համաձայն փոխահատուցումներ և օրենքով սահմանված այլ վճարների չկատարվեն տուժած անձանց, և

(բ)ՎՊ համաձայն չսկսվի համապարփակ եկամուտների և կենսապայմանների վերականգնման ծրագիրը:

Տեղաբնակներ

9.Վարկառուն պետք է ապահովի և պարտադրի ՀՁԿ-ին, որպեսզի վերջիիս կողմից իրականացվող ծրագիրը որևէ բացասական ազդեցություն չգործի տեղի բնակչության վրա ԱՔԴ-ի իմաստով: Նման ազդեցության դեպքում վարկառուն պետք է պարտադրի ՀՁԿ-ին մշակել և իրականացնել տեղաբնակների հետ կապված ծրագիր՝ համաձայն Վարկառուի գործող օրենքների, կանոնակարգերի և ԱՔԴ-ի:

Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ

10. Վարկառուն պետք է ապահովի կամ պարտադրի ՀՁԿ-ին ապահովել անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ ՇՄԿՊ և ՎՊ-ի իրականցման համար:

Մրցութային փաստաթղթերի և աշխատանքների իրականացման պայմանագրերի համապատասխան դրույթների ապահովում

11. Վարկառուն պարտավոր է ապահովել կամ պահանջել ՀՁԿ-ից ապահովելու Աշխատանքների կատարման վերաբերյալ մրցութային բոլոր փաստաթղթերում և պայմանագրերում կատարողների պարտավորությունները սահմանող հետևյալ դրույթների առկայությունը.

(ա) գործունեության ծավալում ՇՄՆԶ-ի, ՇՄԿՊ-ի և ՎՇՓ-ի դրույթներին համապատասխան (այնքանով որքանով մարդիկ կարող են ազդեցություն կրել շինարարական աշխատանքների ժամանակ), ինչպես նաև Անվտանգության մոնիտորինգի հաշվետվությամբ սահմանված բոլոր ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունների համապատասխան.

(բ) համապատասխան բյուջեի տրամադրում՝ վերոհիշյալ բնապահպանական և սոցիալական միջոցառումների իրականացման համար,

(գ) Գրավոր ծանուցում վարկառուին ցանկացած անսպասելի ռիսկերի մասին, որոնք կապված են բնապահպանական, վերաբնակեցման կամ տեղաբնակների կամ այն ազդեցությունների հետ, որոնք առաջանում են շինարարական աշխատանքների, ծրագրի իրականացման ընթացքում, որոնք նախատեսված չեն ՇՄՆԶ-ում, ՇՄԿՊ-ում և ՎՇՓ-ում,

(գ) Համապատասխան տվյալների ներկայացում ճանապարհների իրավիճակի, գյուղատնտեսական հողերի և այլ ենթակառուվվածքների մասին՝ մինչև նյութերի տեղափոխումը և շինարարությունը սկսելը և

(ե)Անցումային ճանապարհների, տեղական ենթակառուցվածքների, գյուղատնտեսական հողերի առնվազն նախկին վիճակին վերականգնում՝ շինարարական աշխատանքերի ավարտից հետո:

Անվտանգության մոնիտորինգ և հաշվետվություններ

12. Վարկառուն պետք է կատարի կամ կպարտադրի «ՀՁԿ» ՓԲԸ-ին կատարել հետևյալը՝

(ա) Ներկայացնել Անվտանգության մոնիտորինգի կիսամյակային հաշվետվություններ և այդ հաշվետվություններից համապատասխան տեղեկատվություն տրամադրել նաև Ծրագրի իրականացման արդյունքում տուժած անձանց,

(բ) Եթե որևէ Ենթածրագրի շինարարության, իրականացման կամ գործողությունների ընթացքում չնախատեսված սոցիալական և/կամ բնապահպանական որևէ ռիսկ և/կամ ազդեցություններ ծագեն, որոնք նախատեսված չէին կիրառվող ՇՄՆՁ-ով. ՇՄԿՊ-ով և ՎՊ-ով՝ հրատապ իրազեկել ԱՁԲ-ին նման ռիսկերի կամ ազդեցությունների ծագման մասին՝ դրանց մանրամասն նկարագրությամբ և վերականգնման համար առաջարկվող գործողությունների պլանով, և

(գ) խախտման մասին տեղեկություն ստանալուց հետո, հրատապ զեկուցել ՇՄԿՊ-ի կամ ՎՊ-ի միջոցառումների կամ պահանջների առկա կամ պոտենցիալ խախտման մասին,

Արգելված Ներդրումների Ցուցակ

13.Վարկառուն պարտավորվում է ապահովել կամ պահանջել ՀՁԿ-ից ապահովելու, որպեսզի Վարկի գծով ստացված որևէ գումար չօգտագործվի ԱՔԴ-ի Հավելված 5-ում նշված՝ արգելված ներդրումային գործունեությունների ցանկում ներառված որևէ գործունեության ֆինանսավորման համար:

Աշխատանք, առողջություն և սոցիալական ապահովություն

14. Վարկառուն պարտավորվում է երաշխավորել կամ պարտադրել «ՀՁԿ» ՓԲԸ-ին երաշխավորել, որ բոլոր Կապալառուները՝ (ա) համապատասխանեն գործող աշխատանքային օրենսդրության պայմաններին, (բ) աշխատանքի մեջ ներգրավեն կանանց և տեղի աշխատուժին, այդ թվում կարիքավոր անձանց, որոնք բնակվում են համապատասխան Ենթածրագրի հարևանությամբ, (գ) շինհրապարակներում տարածեն տեղեկատվություն սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին, այն մարդկանց համար, որոնք ներգրավված են շինարարության մեջ, (դ)նույնատիպ աշխատանքի համար հավասարաչափ վճարեն և տղամարդկանց և կանանց, (ե) ապահով աշխատանքային պայմաններ ստեղծեն արական և իգական սեռի աշխատողների համար, (զ)աշխատանքի չընդունեն երեխաներին, և (է) գործեն Աշխատանքներ իրականացնող կապալառուների նկատմամբ կիրառվող Գենդերային գործողությունների պլանի դրույթներին համապատասխան: Բոլոր Ենթածրագրերի աշխատանքային պայմանագրերը պետք է պարունակեն վերոհիշյալ դրույթների հատուկ կետեր, որոնց համապատասխանությունը խստորեն կվերահսկվի իրականացման ընթացքում:

15.Վարկառուն պարտավորվում է ապահովել կամ պահանջել ՀՁԿ-ից ապահովելու Ծրագրի համաձայն վերականգնված կամ կառուցված Ծրագրի օբյեկտների համապատասխանությունը նախագծի տեխնիկական պայմաններին, ինչպես նաև շինարարության վերահսկման, որակի վերահսկողության և Ծրագրի կառավարման իրականացումը միջազգային ստանդարտների և պրակտիկայի համաձայն

Գենդերային քաղաքականություն և զարգացում

16. Վարկառուն պարտավորվում է ապահովել կամ պահանջել ՀՁԿ-ից ապահովելու Գենդերային գործողությունների պլանի ամբողջությամբ և ժամանակին կատարումը և այս նպատակով համապատասխան ռեսուրսների բաշխումը: Սահմանված գենդերային նպատակներն իրականացնելու համար, Գենդերային գործողությունների պլանը, ի թիվս այլոց, պետք է ներառնի (i) բնակիչների կողմից ջրի օգտագործման ուսումնասիրություն՝ ըստ սեռի, կարիքների և գիտելիքների պակասի ուսումնասիրություն՝ իրագան սեռի 50% հարցվողների շրջանում, (ii) գենդերային վերլուծություն և հանրային իրազեկման քարոզարշավի իրականացում՝ գենդերային վերլուծության հիման վրա, (iii)10 վերապատրաստման դասընթացների անցկացում թիրախային քաղաքներում և գյուղերում որպես իրազեկման քարոզարշավի մի մաս՝ 50% կանանց մասնակցությամբ, (iv) տեղերում մարդկային ռեսուրսների տվյալների բազայի առկայություն՝ ըստ սեռի, (v) բողոքների և բաժանորդների կարծիքների տվյալների բազա՝ ըստ սեռի և բողոքների բովանդակության վերլուծություն՝ ըստ սեռի:

Պատշաճ կառավարում

17. Վարկառուն պարտավորվում է ապահովել կամ պահանջել ՀՁԿ-ից ապահովել՝ (ա) Ծրագրի շրջանակներում վերականգնված կամ կառուցված Ծրագրի որևէ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման, (բ) Ծրագրի շրջանակներում վերականգնված կամ կառուցված Ծրագրի որևէ օբյեկտի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքի օտարման, փոխանցման կամ զիջման, կամ (գ) Ծրագրի շրջանակներում վերականգնված կամ կառուցված Ծրագրի որևէ օբյեկտի վերաբերյալ որևէ վարձակալության կամ այլ պայմանագրի կնքման կամ դրա շահագործման կամ պահպանման վերաբերյալ ՁՏՊԿ-ի կամ ՀՁԿ-ի գործառույթների կամ լիազորությունների փոփոխության դեպքում՝ ԱԶԲ-ի համաձայնության ձեռքբերումը նման ծրագրի իրականացումից առնվազն վեց ամիս առաջ և նման փոփոխությունը կատարվում է իրավական ձևակերպմամբ և պարզ կարգով:

Կառավարում և Կոռուպցիա

18. Վարկառուն, Ծրագիրն իրականացնող մարմինը և ՀՁԿ-ն պարտավորվում են. (i) գործել ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականության համաձայն (փոփոխված 1998թ.) և ընդունել, որ ԱԶԲ-ն իրավունք ունի ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով իրականացնել Ծրագրին առնչվող կոռուպցիայի, խարդախության, գաղտնի համաձայնության կամ հարկադրանքի վերաբերյալ ցանկացած կասկածելի գործի քննություն. և (ii) մասնակցել նման քննությանը և տրամադրել անհրաժեշտ աջակցություն քննությունը բավարար կերպով իրականացնելու համար:

19. Վարկառուն, Ծրագիրն իրականացնող մարմինը և ՀՁԿ-ն պարտավոր են ապահովել ԱԶԲ-ի համար ընդունելի հակակոռուպցիոն դրույթների, ներառյալ՝ կատարող և Ծրագիրն իրականացնող ընկերությունների, ինչպես նաև Ծրագրի հետ առնչություն ունեցող բոլոր կատարողների, մատակարարների, խորհրդատուների և ծառայություն մատուցող այլ ընկերությունների հաշվետվությունները և հաշիվները ստուգելու և ուսումնասիրելու ԱԶԲ-ի իրավունքը սահմանող դրույթների ներառումը բոլոր մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում: